

Այխարհագրական ու գինուորական գիտութեանց վրայ մէկ քանի արժանաւոր գրուածքներ հրատարակեց, որոց մէջ առաջին ու զլիաւոր տեղին ունի՝ Զինուորական Տեղագրութիւնը Եւրոպայից բառածն, տունայ 'ի լոյս յամին 1837, յորում կը տեսնուի մեծ հմտութիւն այխարհագրական և գինուորական :

Պետլինու գինուորական վարժանուցին մէջ քիչ մ'ատեն ամենայն գովութեամբ ուսուցչի պաշտօն վարելէն ետքը, վերադարձաւ իր զօրագունդը, և 1832ին զրկուեցաւ Բրուսիոյ տէրութեանէն Պեճիոյ սահմանագլուխը քննելու և ապահովելու համար, որ յայնժամ դեռ ևս խռովութեան մէջ էր յետ յեղափոխութեան :

Նոյնպէս և ուրիշ բազում առթից մէջ զինուորական գեղեցիկ ապագայ և մեծ յարմարութեան ցոյց տալով, 1835ին հազարապետ կոչեցաւ և յաջորդ տարին զօրապետ : Ինքը սորվեցուց ֆրեզերիկոս կարողու իշխանին ռազմագիտութիւն և այխարհագրութիւն . և ապա 1846ին ընկերեց նմա Պոնն քաղաքին համալսարանը . ինչպէս նաև աւելի ետքը ուրիշ կողմը, երբ ֆրեզերիկոս կարողու իր սորված ուսումներն կատարելագործելու համար կը ճանապարհորդէր զանազան կողմեր :

1848ին մայիս ամսոյն մէջ բանակին ութերորդ գնդին զօրագլուխ անուանեցաւ, և նոյն պաշտօնի ուղղեց Պատենի մեծ զբսութեան մէջ եղած զօրագնդին գործերն : Իսկ 1850ին ետեղապահ գնդապետի և երեսուներորդ զօրաբաժնին հրամանատարութեան աստիճան ընդունեցաւ . և 1856ին բարձրացաւ 'ի պատիւ բարձրաստիճան զօրապետութեան . և 1859ին նախագահ բազմեցաւ բանակին վերակազմութեան ժողովոյն :

Բայց Ռոն զօրապետին անունը փառաւորոյն աւելի 1870 ամին պատերազմն եղաւ, յորում տեսնուեցաւ գինուորական զօրաւոր կազմութիւն մը

ու կարգաւորութիւն, որ Ռոն զօրապետին արդիւնքն է, զի էր այն ատեն պաշտօնեայ պատերազմի 'ի Բրուսիա : Զիք տարակոյս որ 1866 և 1870 ամաց պատերազմունքն ամեն գինուորական ազգաց մտադրութիւնը առ ինքեանս դարձուցին, ուսանել անդ ռազմայարդարնոր գիտութիւն և մուծանել իրենց բանակին մէջ հիմնական փոփոխութիւններ . ուստի գինուորական կրթութիւնն հասարակաց դատտարակութեան զլիաւոր մասերէն մէկն եղաւ, որպէս զի հայրենիքն 'ի ժամ պատերազմի զամենայն որդիս իւր կամ զբաղաքացիս մէկմէկ գինուոր տեսնայ : Բաց ասկէ գինուորական գրութիւնն իսկ էական կերպարանափոխութիւն կրեց . անանկ որ գրեթէ բոլորովին վերցաւ զրամով կամ փոխանակութեամբ գինուորութենէ ազատին : 1870 ամին պատերազմը թէպէտ արիւնահեղ և տխուր՝ բայց օգտակար զաս մ'եղաւ ամեն գինուորական ազգաց :

Ն Ա Ք Ո Ւ Ե Ո Ն Գ :

Քանի մը խօսք ալ նարդլեննի ներքին քաղաքագիտութեան վրայ բանը, որ բոլորովին համաձայն գտաւ իր յամին 1839 հրատարակած գաղափարացը, այսինքն տիրապետական՝ ըստ սահմանադրութեան, և ռամկապետական՝ ըստ վարչութեան : Սահմանադրութիւնը կայսեր ձեռքը անսահմանափակ իշխանութիւն մը կու տար, և կը ջնջէր սպազութեան ազատութիւնը և ժողով գումարելու իրաւունքը, կ'ուղղէր ընդհանրական բուհարկութեան ընտրութիւնները, և կը նուաճէր զամենայն խռովութիւնս 'ի ձեռն զօրութեան բանակին, կղերին և ատենից : Յայտնի է

1 Տես ԱՍ հատոր, էրես 283.

թէ կը խօսուէր յաճախ ազատութեան վրայ, որ պիտի երևէր օր մը երբ ժողովրդեան քաղաքագիտական կրթութիւնն լըննալու ըլլար. բայց դժբախտաբար ժողովրդոց ազատութեան համար բացարձակ ճնշումէ աւելի ֆիսաս կարու վատթար վարչութիւն չի կրնար ըլլալ. և ՚ի բազում փորձոյ ուսաւ Նաբոլէոն և համազունեցաւ թէ գաղղիական ժողովուրդն-տակաւին հասունացեալ չէ յապատութիւն : Ուստի յաջողեցաւ աւելի իր յայտարարութեան երկրորդ մասամբն, այսինքն առկայեցեալական վարչութեամբ : Չայն զոր Լուզովիկոս-փիլիպպոս չէր կրցած ընել արգելուելով ՚ի տեղական ազդեցութեանց կամ ՚ի շահագիտութենէ վաճառականաց, կայսերական ինքնիշխանութիւնն ՚ի գլուխ տարաւ լիուրի և շքեղ յաջողութեամբ : Վաճառականաց տրուած ազատութիւնը, երկաթուղեաց շինութիւնը, բոլոր Գաղղիոյ մէջ կողմնական ճանապարհաց բացումը՝ բաւական էին ապահովել կառավարութեան ճոխ ու արծանաւոր էլեր ՚ի պատմութեան : Ասոնց վրայ աւելցուց և կայսրն շատ մը գործեր, որոնք թէպէտ ոչ այնչափ երևելի՝ բայց կարևոր ու օգտակար էին. երկրին գրեթէ բոլոր մեծամեծ քաղաքները կերպարանափոխ ըրաւ, ինայութեան արկղերն անհամեմատ կերպով աճեցուց, և Ովկիանու ու ժիրոնտ գաւառին մէջ եղած լայնածաւալ ամայի ու խոպան դաշտավայրերը հարթեց ու արօրագրելի ըրաւ :

Բայց այս նիւթական մեծամեծ շահերն չկասեցուցին զնա ՚ի մտաւորականէն : Գիտութեանց ճեմարանին երևելի հրատարակութիւնըն շարունակուեցան. կառավարութիւնն ՚ի լոյս հանեց Նաբոլէոնի Առաջնոյն թղթակցութիւնները, յոտին կալաւ ու խրախուսեց շատ մը ուսումնական ուղեորութիւններ, և ինդրակներ առաքեց յԱրևելք, ու դիւաններն կարգի դրուելով բացան առաջի ամենեցուն : Եւ եթէ, ըստ ասելոյ իմաստնոց Գերմանիոյ, քնական գիտութեանց առաջին փառքը

զգալի կերպով անկաւ ՚ի Գաղղիա՝ մենք այդ անկման ամենեկին նշան մը չեմք տեսներ ՚ի պատմութեան, եթէ մտածեմք ըստ խորամուխ գիտութեան և ճշդութեան հետազօտութեանց և եթէ ըստ ճշգրիտ աւանդութեան նոցա : Դարձեալ նախնական կրթութիւնն այնպիսի փութոյ պնդութեամբ յառաջադիմեց, որ դպրոցաց թիւը գրեթէ կրկնապատիկ աւելցաւ :

Սակայն պէտք է գիտնալ որ ժողովրդեան իւրաքանչիւր անհատից դիտումն ու մտադրութիւնն աւելի նիւթականին քան մտաւորականին դարձեր էր : Ի բաց առնելով հասարակաց գործոց հետ ամենեկին վերաբերութիւն չունեցող անձինքը, ինքնիշխան կառավարութիւնն պատճառ եղաւ ինքնասիրութեան և զբօսասիրութեան օր քան զօր աւելի ևս սաստկանալուն. նոյն իսկ կառավարչաց դասն այս լպիրծ ու զաղփաղփուն զառ ՚ի թափին վրայ կը պտըտէր : Բայց մեծապէս կը սխալինք եթէ զինքնիշխան կառավարութիւնն միայն համարինք պատճառ ապականութեանց ու թեթեւութեանց, վասն զի ասոնք հետեանք են նոյն իսկ չափազանց հարստութեանց ու անհոգ կենաց : Լուզովիկոս - փիլիպպոսի ժամանակն իսկ յայսմ մասին ցաւալի օրինակներ կ'ընծայէ մեզ. և ընդհանուր խօսելով, ժողովրդեան մը հասարակաց բարոյականն մեծապէս կը վտանգի եթէ ապականութեան օրինակն ՚ի պաշտօնականաց կամ ՚ի կառավարչաց տրուելու ըլլայ : Գիտեմք որ Նաբոլէոն անխնայ ու անխորհուրդ վատնիչ էր արծաթոյ. և ցուցուեցաւ յայտնապէս որ ոչ միայն վայելելու եկամուտ մը չունէր նա ՚ի կենդանութեան, այլ և ոչ իր ընտանեացը թողուց յետ մահուն, Եւ սակայն այս ևս ստոյգ է որ Եւգենէ կայսրուհին հաւատարմութեամբ չարատաւորեց երբէք իր անունը, մինչեւ հակառակն և զաւ կայսերական Գաղղիոյ բարձրաստիճան շատ ընկերութեանց ու ընտանեաց մէջ : Այս ընկերութիւնները կամ ընտանիք թէ անարատութեան և թէ բա-

րուց սրբութեան մասին ցաւալի վիճակի մը մէջ էին: Նաբոլէոն՝ տարագրութենէն կայսերական ակտոր բարձրաՆալու համար՝ Գաղղիոյ ամեն իր աչքին յաջողակ երեցող անձանց դիմեր էր, այլ յետ պետական հարուածոյն գաղղիական վաղեմի ընկերութեան զըլխաւորներն հեռացան սարսափմամբ ու ցասմամբ բախտին ձեռքով ՚ի գձձու-թենէ յաւազութիւն հասնող և արեամբ թափառեալ անձէն. որոց խնայից Նաբոլէոն կամ յազնուութենէ սրտին և կամ ՚ի նշան երախտեաց: Եւ այսպէս ընչից վասնումբ, անյագութիւնը և ապականութիւնը կառավարութեան ծոցէն բոլոր ազգին երակաց մէջ տարա, ծուեցաւ, և օր քան զօր հարստութեան բազմանալուն պատճառաւ չի կրցան պատկառ կալ կարգի ու հաւասարութեան:

Այս ամեն բաներով հանդերձ, Նաբոլէոն յետ պետական հարուածոյն և ոչ վայրկեան մը մոռացաւ իր արտաքին քաղաքագիտութեան յայտարարութիւնը, և գործեց մեծաւ յաշողութեամբ զայնս որ կերպարանափոխ պիտի ընէին զբոլոր Եւրոպա: Տեսաւ սկզբան բոլոր հին Եւրոպան գաշնաւորեալ ընդդէմ իր անձին: Բոլոր տերութիւնք շնորհապարտ էին իրեն անշուշտ՝ որպէս ազատարար ընկերութեան, ինչպէս կոչէին զնա յայնժամ, այն որ պիտի երժանէր զընկերվարութիւն. բայց պոնաբարդեան կայսեր մը դիտումներն միշտ կասկած ու անվրստահութիւն կը պատճառէին իրենց: Նախ քան զամենայն պարտ էր կայսեր խափանել տերութեանց այս ծածուկ դաշնաւորութիւնը՝ Բիթէ կուզեր ՚ի ձեռս բերել զազատութիւն գործելոյ: Եւ եթէ փորձ մ՛ուզենար փորձել, ըստ առաջարկութեան Բէրսինսիի, անտառակոյս բոլոր Եւրոպան ՚ի թշնամութիւն իւր կը գրգռէր: Մնոր համար կարեւոր էր այնպիսի խնդիր մը որ տարածայնէր իրարու մէջ բոլոր Եւրոպական տէրութիւնները, որով կը հարթէր ճանապարհն Նաբոլէոնի առջին: Եւ ա-

հա նոյն ժամանակները Արևելք կրօնական դժուարութիւն մը ծագելով, յարմար առիթ մ՛եղաւ իրեն համար այս փափաքած տարածայնութիւնը ձգելու տէրութեանց մէջ, Յոյն և Ղաթին կրօնաւորք, ՚ի Բեթլեհէմ, խնդիր մ՛ունէին եկեղեցւոյն փականաց նկատմամբ: Բոտ գաշնադրութեան եղելոյ յամին 1740 Գաղղիոյ և Բ. Գրան մէջ, այս փականքը հռովմէական ուղղափառք պիտի պահէին. բայց մինչև այն ատեն Յունաց քով մնացեր էր, և Գաղղիան ալ ամենեկին խնդիր չէր հանած: Նաբոլէոն այս իւր իրաւանցը կատարումն պահանջեց, յետևով 1740 ամին դաշնադրութեան միայ, և Բ. Գրան իրաւունք տուաւ: Ասով Նաբոլէոնի ուղածը կատարուեցաւ. վասն զի Նիկոզայոս կայսրն, դուխ և առաջնորդառուսայրուական կրօնին, լսելով ամեն եղածները՝ սաստիկ առնուեցաւ, և օգոստոսափառ Սուլթանին դէմ կեցաւ:

Մինչև այն ատեն Գաղղիացւոց կրօնական նախանձայնութեան ոչ ոք ծանրագոյն կշիռ մը կու տար յԵւրոպա. և ոչ ոք կրնար կասկածել թէ այն պարծանաց փականքը կրնայ պատերազմի պատճառ ըլլալ: Բայց խնդիրը բոլորովին տարբեր կերպարան մ՛առաւ. վասն զի Ռուսիա զօրաւոր բանակ մը սկսաւ գումարել ՚ի վերայ Բրուտի, և տարապայման պահանջմամբ մը կ՛ուզէր իբրև պաշտպան ճանչցուիլ յունական եկեղեցւոյն ընդ ամենայն Տաճկաստան. և այս իւր պահանջումը հաստատելու դիտմամբ կը զրաւէր զինուորապէս զանուբեան իշխանութիւնները: Մինչդեռ այս բաներս կ՛ըլլային, զժբախտ փականքն բոլորովին մոռցուեցաւ յԵւրոպա, և Արևելեան խնդիրն իր ամենայն ընդարձակութեամբն ել լեկտրացուց զամենեսին, և Ռուսիա հարստահարող համարուեցաւ անյանց Տաճկաստանի: Գաղղիացի վեհապետն միշտ յանուն արդարութեան և խաղաղութեան յայտնեցաւ յիւր կողմն որսալ զԱնգղիա զվարեմի բարեկամն Տաճկաստանի, առ ՚ի զէն առնուլ ընդ-

դէմ Ռուսիոյ . և վերջապէս յամին 1854 ՚ի դեկտեմբեր ամսնսն որոշեց նոյն իսկ և Աւստրիա մտանել ՚ի դաշնակցու թիւն արևմտեան արքունեաց : Այսպէս կ'ապահովէր իր վիճակն միացեալ աշխարհիս առաջին ծովագորտէրութեանց հետ . բայց պէտք էր մտածէր որ այս կերպով կը կտարէր արևելեան երեք արքունեաց վաղեմի դաշնակցութիւնն և բոլոր Ռուսիոյ ատելութեան նշակակ կ'ըլլար :

Բախտն շարունակ կը ծիծաղէր Նաբոլէոնի գաղտնի ըզձիցը . բայց Աւստրիա արթըննալով ամենևին չէր իշխէր մտանել ՚ի պատերազմ ճակատ առ ճակատ ընդդէմ Ռուսիոյ առանց ՚ի թիկունս իւր ունենալու գիերմանիս : Այս մտածմամբ բանագնացութիւն մը բանալով , բոլորովին տարածայնեցաւ Բրուսիոյ հետ , որով սուսերը պատեանը գնելու հարկեցաւ ընդդէմ դեկտեմբերի դաշնակցութեան : Անգղիս սաստիկ նեղացաւ այս բանիս վրայ , և ցուցուց յայտնապէս իր բարկութիւնը և տհաճութիւնը ընդդէմ Աւստրիոյ ըրածին : Միով բանիւ , յետ Դրիմու պատերազմին , Աւստրիա ինք զինքը բոլորովին կողմացեալ գտաւ Եւրոպիոյ մէջ , այն Աւստրիա զոր Բէրսինսի յամին 1851 ներկայացուց Պեպինի արքունեաց իբր բնական հակառակորդ Նաբոլէոնեան դրութեան :

Մինչդեռ այս բաներս կ'ըլլային , կայսրն Նաբոլէոն 1855ին ապրիլ ամսն մէջ պայտնական այցելութիւն մ'ըրաւ Վայթ (Wight) կղզոյն մէջ Անգղիոյ վեհապետաց : Մեծ բան մ'էր դեկտեմբերի 2ի մարդուն համար , յետ երից ամաց պետական հարուածոյն ընդունուիլ իրև հիւր և բարեկամ Վիկտորիա զիշոյէն . ուսկից կ'իմացուի թէ կայսրն մեծ փառաց մէջ էր : Գուրսը ամենայն գործերն բարուք կ'ընթանային քան որչափ կը փափաքէր : Դաշնակցաց բանակն օր քան զօր կը շրջապատէր Վիենաստափոլ ՚ի մօտանց . Սարտենեա ևս մտած էր մեծ դաշնակցութեան մէջ լաւագոյն քան զԱւստրիա

իր ռեսերվա թշնամին , Յետ 1810 ա. մին՝ Գաղղիա Եւրոպիոյ մէջ ունեցած չէր այսպիսի գեղեցիկ ու փառաւոր վիճակ ու դիրք մը . ուստի թէպէտ և գաղղիական ժողովուրդը մեծ խնդու թեան և հաճութեան մէջ էր , սակայն համոզուեցաւ կայսրն Նաբոլէոն որ այս մեծ ազգին համար բաւական չէ միայն զինուորական փառքն , այլ պէտք էր և իրական շահ մը ՚ի վարձ իր զօհից ու ճգանցը , Արևելքէն բանի մ'ակնկալութիւն չէր կրնար ունենալ , ինչու որ զՏաճկաստան պաշտպանելու համար միայն մտած էր ՚ի պատերազմ . իսկ այն մտածութիւնն զոր արդէն 1855ին յայտնած էր Նաբոլէոն , այսինքն պահանջել ՚ի Ռուսիոյ զվերահաստատութիւն թագաւորութեան լեհաց , մերժեցաւ յԱնգղիոյ , և ուրիշ կողմանէ օգուտ մը չկար Գաղղիոյ : Բայց Նաբոլէոն մտաց մէջ ուրիշ մտածութիւններ ունէր . ուստի որոշեց որոնել մտերմաբար յայնմ մասին իր թագաւորական հիւրոց բերանը : Օր մը յելանեն ՚ի ճաշոյն՝ խօսելով , խմելով ու ծխելով ընտանի պարզութեամբ ու մտերմութեամբ , ըսաւ Ապերտ իշխանին , թէ իր ցեղը յաջորդաբար հաստատելու համար ՚ի Գաղղիա բան մը միայն կը պակասէր իրեն և այն անհրաժեշտ կարևորութեամբ . այսինքն թէ գաղղիական կայսերութեան հետ միացնել Պելճիան և Հոննոսի ձախակողմեան ափունքը : Իշխանը գոչեց . « Ինչպիսի դրդիւն , ինչպիսի մաքառումն և ինչպիսի աղէտք : Մեր և Բրուսիոյ խորհրդարանին ընդդիմութիւնը ահաւոր պատերազմ կը յարուցանէ » : — « Ամենևին , պատասխանեց Նաբոլէոն , և ոչ հրացանի մը Նարուած պիտի նետուի : Կու տամ ձեր խորհրդարանին վաճառականութեան գեղեցիկ դաշինք մը . իսկ Բրուսիա գիտէ իր շահերն . ինքը կու տայ ինձի երկու միլիոն բնակիչ , և անոր տեղ կ'առնու ՚ի Գերմանիա տասը կամ տասուերկու միլիոն » : Իշխանը շուտով մը փոխեց խօսքը վախնալով հետևանքէն :

Այնքան պարզութեամբ զուրցուած խօսքն, թէ՛ « Պոնաբարդեան ցեղն ինք զինքն, յոտին բռնելու համար պէտք ունի Պելճիոյ և Հոննոսեան գաւառաց » , ամբողջացուցիչ կրնայ համարուիլ այն յայտարարութեան՝ զոր ըրաւ Բերսիւնեի յամին 1851 : Զայն զոր ներկայացուցեր էր յայնժամ իբրև պարզ ենթադրութիւն մը՝ հասարակաց կարծեաց վրայ ընելիք տպաւորութիւնն ի մանալու համար՝ Հոննոսի ձխտողական ասիան ասացման խնդրոյն մաւին, ներկայացուց զայն Նաբոլէոն իբրև անհակառակելի պահանջում մը : Կ'երևայ որ այս ստացումը Պոնաբարդեան ցեղը Գաղղիոյ թագաւորական ատոլոյն վրայ հաստատելու, և նարուէնեան գաղափարաց ու քաղաքագիտութեան գլխաւոր կետերէն ու կայսեր առաջին պարտուց մէկն եղած պիտի ըլլայ : Ամենեւին և ոչ փոքրիկ տարակոյս մը գործոյն կարելիութեան վրայ . ասիկա պէտք է որ ըլլայ, ուրեմն ըլլայ, ըսաւ կայսրն առ իշխանն՝ անխռով և պաղ տրեամբ : Բայց որչափ որ բանի մը ստուգութիւնը մեծ է՝ այնչափ այնուազ անպարանայ պէտք ունի : Նաբոլէոն Գ չունէր իր հօրեղբոր նման պատերազմական մարդոյ և ոչ կաթիլ մ'արիւն երակացը . մէջ : Վըստահացած էր իր մտաւոր կարողութեան վրայ թէ պիտի կարենայ խաղաղութեամբ միայնել Գաղղիոյ հետ զՀոննոս : Կը համարիւք թէ նոյն ասեմ տակաւին համատարիմ իր հին սկզբանց վրայ, ամենեւին չէր երողեր միջամուխ ըլլալ Գերմանիոյ ներքին գործոց . միայն բողոքով պիտի իմանար տպագայսին մէջ որ ձախակողմեան ասիանց միութիւնը կ'ենթադրէ կամ պէտք է ունենայ իբր հետեւանք և անկողմեան ասիանց միութիւնը :

Բայց պետական հարուածով 'ի Գաղղիա, և Ղրիմու պատերազմով 'ի բոլոր Եւրոպա ապահովելով իր գերբը, Նաբոլէոն իր գլխաւոր համարած գործոյն ուղեց զբաղել, այսինքն Գաղղիան 'ի զուլու կարգել բոլոր լատինացեղ ժողովուրդոց և :

զավրոցոց 'ի հարուակողմն Եւրոպիոյ : Ասոր համար կարեւոր կը տեսնէր Աստորիոյ իշխանութիւնն ու ազդեցութիւնը բառնալ յիտալիոյ . ուստի Ղրիմու պատերազմը լմննալէն ետքը բոլոր իր գարծոց նպատակն առ այս ուղղեց : Սակոյն մինչև հիմա եղածները պատրաստութիւն մ'էին ապագային, և Եւրոպիոյ քաղաքակրթիչ կերպարանափոխութեան մեծ գործն հիմա պիտի սկսէր, յորում պիտի տեսնուէր ամենայն մասամբ կայսերական կառավարութեան բոլոր տկարութիւններն ու գորութիւնները : Աստ ինք զինքը լիով նարուէնեան գաղափարաց մէջ կը տեսնար . ամենայն հնարք յարմար կը թուէին նմա առ 'ի հասանել 'ի նպատակն և կամ խորտակել զամենայն ընդդէմակացութիւն :

Ղրիմու պատերազմը դարձեալ 'ի լոյս հանեց այն հին առածը կամ ճրչմարտութիւնը թէ՛ Եւրոպիոյ հասարակաց կարծիքը կրնայ զօրաւոր դաշնակից մ'ըլլալ զինուորական՝ բայց աւելի քաղաքագիտական գործոց : Նաբոլէոն չարհամարհեց այս ոյժը, և մեծապէս զգուշացաւ չի մատնել կերպով մը և ոչ մէկ բառով իր ճշմարիտ նպատակն, այն է հեգեմոնութիւն հարաւային Եւրոպիոյ վրայ : Իր գտնուած անձնական վիճակը բնական առիթ մը կ'ընծայէր իրեն աւելի ևս հրապուրիչ յայտարարութիւն մը դուրս հանելու : Նաբոլէոն ընտրեալ յետին միլիոն քուէից, և ներկայացուցիչ ազգային կամաց 'ի Գաղղիա, պէտք էր որ անտես չառնէր ուրիշ ազգաց ջանքը յազատութիւն, և թըշնամի ըլլալ ընդդէմ ս և է իշխանութեան մերժեալ յազգային կամաց : Ուրեմն իտալիա կը մերժէր Աստորիոյ օտարազգի իշխանութիւնը, և Նաբոլէոնի ռամկապետական սիրտը պէտք էր որ կենդանի համակրութիւն մը զգար իտալացուց այս ջանիցը : Եւ սակայն երկայն ժամանակ պատրուակեց ինք զինքը . և որ մը կարճ խորհրդածութեամբ ու չարժած սրտով այս խօսքերն ըսաւ իտալիոյ դեսպանին յամին

1854 . « Եթէ յետ Ղրիմու պատերազմին Լեհաստան ու Իտալիա գտնան իւրենց ազգային անկախութիւնը , քաղաքակրթութեան ապագայն ապահովեալ է : 1855ին վերջերը հարցոց յանկարծ Սարտենիոյ մեծ պաշտօնէին՝ Քափուրին , թէ՛ « Ի՞նչ կրնայ ըլլուիլ Իտալիոյ համար » : Եւ աւելի ետքը 1856 ա. մին դեսպանաժողովոյն մէջ . խնդիր հանեց Հռովմայ ու Նաբոլիի գործոց վրայ , որով կրցաւ Քափուր Իտալիոյ դժուարին վիճակին նկատմամբ ծանր ամբաստանութիւններ հրատարակել առաջի ժողովոյն ընդդէմ Աւստրիոյ և Քահանայապետին : Որուն վրայ երկու տարի անցնելէն ետքը՝ Քափուր և Բիէ-մոնդի Ազգային ժողովն սկսան Իտալական ժողովրդեան մէջ միութեան և ազգային անկախութեան գաղափարներ տարածել : Ապա յամին 1858 տեսաւորեցան մէկտեղ Քափուր և Նաբոլէոն ՚ի Բլոմպիէր՝ որ անկանի ՚ի մէջ Վոսկեան լեռանց : Նաբոլէոն երբ չուզեց համոզուիլ Իտալական մի ու բացարձակ թագաւորութեան խորհրդոյն , այն ատեն Քափուր , որ ամեն բանէ առաջ Աւստրիոյ Իտալիայէն ելլալն կ'ուզէր , պատրաստ ցուցուց ինք զինքն հաւանելու Իտալական դաշնակցութեան՝ որուն մէջ մտնէր նոյն իսկ և Քահանայապետը : Լոմպարտիա-Վենետիկ որ մինչև այն ատեն Աւստրիոյ իշխանութեան տակ էր՝ պիտի ըլլար Բիէ-մոնդի , ինչպէս նաև Մոտենա ու Բարմա . իսկ Գոսկանայի մեծ դքսութիւնը պիտի ունենար քահանայապետական կուսակալութիւն , եթէ հաւանելու ըլլար մտնել դաշնակցութեան մէջ . և վերջապէս եթէ այս ամեն բաները կատարուէին , Նիցցան ու Սալոյան ալ Գաղղիոյ պիտի տրուէր , և այս էր ահա նիւթական շահն որով գոհացնել կուզէին հասարակաց միտքն ու կարծիքն ՚ի Գաղղիա :

Այս ամեն բաները կարի ծածկութեամբ գործեցան ու յարմարեցան : Նաբոլէոն խորհուրդ տուաւ Քափուր կոմսին որ խօսի աներկիւղ և համար-

ձակապէս մերձաւոր պատերազմի մը վրայ , որպէս զի գրգռի Աւստրիոյ կասկածն ու զայրոյթը : Կատարութիւնը մեծ էր ՚ի վեննա , վասն զի յայտնապէս Գաղղիոյ աղքեցութիւնը կը տեսնային գործոյն մէջ . և որոշեցին որ յառաջին սպառնալիս անդ ընդդէմաւստրիական կայուածոց , ամենևին ակնառութիւն չընեն ընդդէմ հարստահարողին օրինաւոր իրաւանց : Բայց գործերնին յաղղամիտ թշնամեոյ հետ էր . Աւստրիոյ ղրղքն Իտալիոյ մէջ բաղուժ մաստմբ խնդիր կը վերցնէր , նոյն իսկ և ըստ հին իրաւանց ազգայ : Ըստ որոշման 1815 ամին դեսպանաժողովոյն որ ՚ի վեննա , միայն Լոմպարտիա-Վենետիկեան թագաւորութիւնը Աւստրիոյ պիտի ըլլար , և Իտալիոյ միւս տէրութիւնքըն անկախ պիտի մնային : Սակայն Աւստրիա մէկէն մասնաւոր դաշնադրութիւններ ընելով Մոտենայի , Գոսկանայի և Նաբոլիի հետ , մեծամեծ իրաւունքներ ստացաւ նոյն աշխարհաց վրայ , ամփոփելով մեծապէս իշխողաց իշխանութիւնը , և հաստատելով նախագահութիւն աւստրիական բովանդակ թերակղզոյն վրայ : Նաբոլէոն , որոյ համար Իտալիոյ ազատութիւնը պատճառաւոր մ'էր՝ որուն ետև կը ծածկէր ժողովրդոց աչքէն իր յառաջապատութեան փափաքը , զայն իբր պատրասարան ծառայեցուց իր քաղաքագիտական նպատակացը : Պահանջեց Աւստրիայէն լուծանել այն դաշնադրութիւններն յանուն հին իրաւանց ազգաց , ՚ի բաց հանելով զԼոմպարտիա : Թէպէտ և ըստ օրինաւորական իրաւանց , Իտալական փոքրիկ տէրութիւնքն ազատ էին դաշնագրել Աւստրիոյ հետ ըստ իրենց հաճոյիցը , բայց Նաբոլէոն ուրիշ կերպարանաւ կը դնէր առջևին ազգաց իրաւունքը , առանց յայտնելու զէն ՚ի ձեռին կերպարանափոխութիւն յարուցանելու միտքը . և կը յուսար միշտ հակառակորդին վրայ ձգել պատերազմին պատասխանատուութիւնը :

Տակաւին չէր ուզէր յայտնել իր խորհուրդները , և կը յուսար հասանել իր

Նպատակին առանց արեանհեղութեան՝ բոլոր մեծամեծ տէրութեանց միջև մտութեամբը : Նարոյէն ընտելեամբ պատերազմասէր չէր, ինչպէս իր հօրեղբայրը : պատերազմի զրգուծիւնն իրեն համար ակամայ էր . և ամեն անգամ կ'ընտրէր մտաւոր զօրութեամբ 'ի ձեռս բերել ուղածն և հասնիլ նպատակին քան պատերազմաւ ու զինու զօրութեամբ :

Անգղիա թէ և կասկածեցաւ քիչ մ'իր զօրաւոր դաշնակցին վրայ, սակայն չե՛րմ համակրութիւն ցուցուց ի տալիոյ ազատութեան դատին : Ռուսիա թէպէտ չէր զգար 'ի սրտէ նոյն համակրութեան եռանդը, բայց յիշատակաւ 1854 ամին՝ նպաստամատոյց կ'երևար նոյն խնդրոյն, միայն թէ Աւստրիա խոնարհէր : Իսկ Բրուսիա որ տիպաճեցաւ Աւստրիոյ բռնած ընթացքին Ղրիմու պատերազմին առեն, նոյն ժամանակէն սկսեալ համամիտ կ'ընթանար Բարիզու ու Բեզրոպուրկի արբունեաց : Բայց վերջապէս յամին 1858 յաշնան, երբ Պեռլինու ազատական կուսակցութիւնը՝ որ երբևէն ընկճեալ էր յՕլմիւց՝ բարձրացաւ 'ի վարչութիւն տէրութեան, Նարոյէն աճապարեց աներկ միտ ձայն տալ պատերազմի ընդդէմ Աւստրիոյ : Կայսրն յամին 1850 'ի փետրուար ամսեան ձեռք առաւ դարձեալ Բերսինեի վաղեմի առաջարկութիւնքը : Առաջարկեց Բրուսիոյ որ եթէ ձեռնառու ըլլայ իրեն իտալական խընդրոյն մէջ, ինքն ալ կ'օգնէ Բրուսիոյ առ 'ի ստանալ զՀոլլոյայն, զՀաննովէր և զՀեստէ կայսրընտրական, որ է ըսել հեղեմնութիւն բոլոր Գերմանիոյ վրայ՝ 'ի բաց առեալ զաւստրիականն : Այսպէս Նարոյէն եկաւ որ ցուցուց առաջին անգամ Բրուսիոյ քաղաքագիտաց 1866 ամին միութեանց գեղեցիկ սահմանները :

Սակայն գաղղիացի վեհապետը վրէպեցաւ իր հաշուին մէջ . վասն զի մէկ քանի ընդհանուր ենթադրութեանց ու փափաքանաց վրայ հիմնեալ, ամենևին ուշ չէր դնէր ոչ անձանց և ոչ դիպացն

որ ընդ առաջ կ'ըլլային : Ռուսի Ռուսիա փոխանակ դաշնակցութեան՝ եւրոպական ժողով մ'առաջարկեց . Անգղիա իբր ամենայն համակրութեամբն առ իտալացիս, ինք զինքն իբրև կամեցող խաղաղութեան ու չէզոքութեան ցուցուց . Իսկ Բրուսիա մերժեց իրեն առաջարկեալ մեծութիւնը, և չուզեց ամենևին յանձնառու ըլլալ 'ի է պատասխանատուութեան, եւ երբ այս կերպով չորեք պատիկ դաշնակցութեան ակնկալութիւնն 'ի գերև ելաւ, Նարոյէն լաւ համարեցաւ Ռուսիոյ ժողով գումարելու առաջարկութեան հաւանիլ : Բայց թէ որ խօսք բանային ժողովոյն մէջ Աւստրիոյ իտալական փոքրիկ տէրութեանց հետ ըրած մասնաւոր դաշնակցութեանց և հեղեմնութեան բոլոր թերակղզոյն վրայ, իր գործը կրնար շատ աւելի դժուարանալ . ուստի որոշեց Վեննայի արբունիքը՝ յիժողով որ գործերը մինչև այն կէտերն յառաջնեն : Կը յուսար կարենալ կանխել զԳաղղիա 'ի պատրաստութեան զինու, ձգել առ ինքն զԳերմանիա, դիմել ուղիղ Բարիզու վրայ . տապալել զկայսերութիւնն, և հաստատել Գաղղիոյ մէջ 'ի ձեռն Հներիկոսի է՝ օրինաւորա-կերական կառավարութիւն : Ռուսի ժողովոյն վերաբերեալ բանազնացութիւնքն երկարաձգեց, և ջանաց միանգամայն դաշնակցիլ Բրուսիոյ հետ մեղմ ու չափաւորեալ պատգամաւորութեամբ : Եւ յանձնելով այդ գործն Ալպերդ արշիւդքօն, ինքը կայսերական վերջնագիր մ'առաքելով՝ պատերազմի ձայն կուտար Սարտենիոյ յուսալով այսպիսի աճապարանօք ձեռք բերել զյաջողութիւն :

Այս պարագայիս մէջ Նարոյէնն իրաւցնէ յանկարծակիի եկաւ : Մեծածիզն գործունէութեամբ հաղիւ ամսուան մը մէջ կրցաւ 100,000 գաղղիացի զօրաց բանակ մը մոյցնել 'ի վերին իտալիա . բայց մեծամեծ յաղթութիւնք՝ սկսեալ 'ի Մաճենոյայէ մինչև ցՄոլֆերի նոյ՝ պսակեցին և քաջալերեցին զաղղիական բանակը : Մոտենայի, Բար-

մայի և Պոլտնիոյ բնակիչքն ապստամբեցան, բայց Գոսկանայի դուքսը չուղերով նոյն ժողովրդոց խնդրոյն մէջ խառնուիլ, հետագաւ իր ամբողջ և Նաբոլէոն պատեհ առիթ համարելով զայն, իր եղբորորդին զիշխանն Նաբոլէոն Ֆիրենցէ դրկեց, առ 'ի կարգել զնա անդ վեհապետ: Մէկ կողմանէ Սալոյիոյ միութիւնը, և զլուկիանոս Մուրազ Նաբոլիի թագաւոր կարգելու համար 1856 ամէ սկսեալ եղած խաբէութիւնքը, կը ցուցնեն որ Բիէմոնդ և անոր հետ բոլոր իտալիա՝ շարեալ էին 'ի մի դաշնակցութիւն ընդ Գաղղիոյ, Նոյնպէս և վերոնա բերգաքաղաքն լաւ ամրացած՝ չըլլալուն՝ ինկաւ շուտով, և Աւստրիացիք վենեդոյէն ալ հալածուելով՝ գաշնակիցք հասան բոլորովին իրենց նպատակին: Վասն զի իտալիա ազատեցաւ աւստրիական տիրապետութենէ և սկսաւ կառավարուիլ Գաղղիացի իշխաններէ:

Բայց անկարծելի ու նորանոր փոփոխութիւնք տեղի պիտի ունենային: Բրուսիա նախ մէջը մտաւ, վասն զի շատոնց 'ի վեր հարաւային Գերմանիոյ հայրենասէր ժողովուրդք մեծազոյ կ'ազդարակէին և կ'ուզէին օգնութեան հասնիլ Աւստրիոյ: Թագազաւ իշխանն 'ի սկզբան կամք չունէր զէն առնուլ առ 'ի հաստատուել զՀենրիկուս Ե՛ յաթոռ, և պաշտպան կալ Աւստրիոյ իտալիայէն դուրս ունեցած շահուցը: Բայց իմանալով տակաւ որ գաղղիական բանակը պիտի նեղէր և գերմանական սահմանը, սկսաւ զինուիլ: Միտքն այն էր որ միջնորդ ըլլայ պատերազմողաց մէջ, խորհուրդ տալով, ինչպէս Նաբոլէոն ևս պահանջեր էր յառաջագոյն, որ գործերն վերահաստատուին յայն վիճակ որպէս վնասեալ յամին 1815, այս ինքն խափանուին Աւստրիոյ հետ եղած ո՛ր և է դաշնագրութեանց և պահպանուին նոյն տէրութեան իտալիոյ մէջ ունեցած կալուածոց: Սակայն Մաճնիզայի ու Սուֆերինոյի յաղթութենէն ետքը և յետ այն ազդակին՝ « իտալիա ազատ մինչև ջնդրիական ծով, » ինչպէս նաև յետ

գաղղնի դաշնաց Բլոմպիէրայ, նոյն յայտարարութիւնն այլ ևս ընդունելի չէր Նաբոլէոնի: Սակայն եթէ պատեւրագմ ծագելու ըլլար Բրուսիոյ հետ, և գերմանական դաշնակցութեան զանազան գունդերը շարուէին Բրուսիոյ սահմանազլխին վրայ, Գաղղիա 400,000 զօրաց բանակի մը յարձակման նշուակ կ'ըլլար, որուն զիմազդելու համար և ոչ կ'իսուն չափ զինուորութիւն կրնար կազմել առ ժամն 'ի վերին Հոննուս: Այս առաջին անգամ Նաբոլէոն գահ ելլալէն ետքը գտնուեցաւ այսպիսի սպառնական վտանգի մը մէջ, և ձեռքը չէր ուղղել այլ ևս անակնունելի գործոց և դիպուածոց անիւր:

Բայց ըստ յաջողելոյ բախտին, Բրուսիոյ խաղաղութեան յայտարարութիւնն ունելի անհաճոյ եղաւ Փրանկիսկոսթովսէփ կայսեր քան Նաբոլէոնի: Աւստրիոյ վեհապետը սաստիկ նախանձէն չէր ուզեր որ գերմանական դաշնակցութեան գունդերը Բրուսիոյ ձեռքով առաջնորդուին: « Կը շնորհենք աւելի լոմպարտիան » , կ'ըսէր Բրակայի պալատոնական լրագիրը: Աւստրիոյ կայսրն չէր ուզեր դարձեալ որ խօսք ըլլայ Մուտենայի, Բարմայի ու Գոսկանայի հետ ըրած դաշնագրութեանց եղման: Կ'ընտրէր աւելի որ 'իր եղբորորդիքը վերահաստատուին Ֆիրենցէի ու Մոտենայի ամբողջ վրայ, քան թէ լոմպարտիան միւսանգամ ձեռք բերէ: Երկու վեհապետաց առանձին տեսակցութեան մը մէջ Նաբոլէոն իմանալով Փրանկիսկոսթովսէփ կայսեր կամքը, ուզեց օգտուիլ անկէ, և կ'ընքեց շուտով 'ի վիլլաֆրանքա՝ խաղաղութեան յառաջընթաց պայմանները, որով Աւստրիա պիտի թողուր լոմպարտիան՝ պահելով զվենեդոյ, և նոյն պայմանաց զօրութեամբ ժառանգութենէ զրկուած իշխանք ալ հաստատուէին պիտի յաթոռ: Այս ամեն բաները պիտի կատարուէին առանց դիմելոյ 'ի զէն, և առանց միջամտութեան ուրիշ տէրութեանց: Եթէ այս բաներս կատարուէին, և եթէ Փրանկիսկոսթովսէփ կայսեր եղբորորդիքը հասնէին



գարձեալ յիշխանութիւն Ֆիրենցէի և Մոտենայի, Աւստրիոյ ազդեցութիւնն կը տարածուէր գարձեալ բոլոր միջին ու հարաւային իտալիոյ վրայ, լուսնաբարտիան կորուսանելով հանդերձ :

Սոյններինոյի յայտնակայաց պանծալի դափնիներովն հանդերձ, Նաբոլէոն զոհ սրտով չի կրցաւ մտնել 'ի Գաղղիա : Նաբոլէոն Առաջին իր հօրեղբայրն՝ անվախ ամենեկին 'ի վտանգաց, Բրուսիոյ միջամտութեան սպառնալեաց մէկէն պատերազմի յայտարարութեամբ պատասխաններ էր . լաւ ըմբռներ էր անիկա որ Եւրոպիոյ ամբողջական կերպարաննափոխութիւնն ուրիշ կերպով չի կրնար ըլլալ բայց եթէ զինու զօրութեամբ : Բայց մէկէն յայսմի եղաւ որ այն մեծ աշխարհակալին եղբորորդին պատերազմական մարդ չէր . պատերազմի դաշտին արհաւիրքն խորունկ կերպով գորգեր էին իր շղային կազմութիւնը, ուստի կը խորչէր անկէ սարսափմամբ : Պէտք էր ուրեմն որ հրաժարէր այս իտալիոյ վրայ գաղղիական զլխաւորութեան խորհրդէն, որուն յիշատակն այնչափ քաղցր էր իրեն . և չկարենալով տալ Բիէմոնդի ոչ զվենետիկ, ոչ վլլոտենա և ոչ զԲարմա, որ պէս խոստացեր էր 'ի Բլուրմիէր, չէր կրնար հետևաբար պահանջել Բիէմոնդէն 'ի փոխարէն ոչ զՆիցցան և ոչ զՍափոյան :

Բայց ծանրագոյն ևս առիթք տազնապոյ առաջի կային նմա : Երեք տարի զամենայն ինչ 'ի գործ դրեր էր՝ առ 'ի բորբոքել զՏուրազգոյնի ազատութեան իտալացւոց, և հիմա նոյն ազգն յեռանդան էր, և չէր ուզեր որ մերժեալ իշխանն վերահաստատուին յաթոռ : Բոլոր Ֆիրենցէի, Մոտենայի և Պոլոնիոյ բնակիչքը կ'աղաղակէին մեծածայն ու միաբարբառ և կ'ուզէին միանալ Բիէմոնդի հետ . և եթէ Նաբոլէոն ըստ իւր ըսածին 'ի Գուրին այս ժողովրդոց փափաքանացն հակառակ շարժէր՝ նպատելով Աւստրիոյ շահուցը, բոլորովին կ'օտարացնէր իրմէ զիտալիա, և այսպէս գործելով առ ոսն կոխած կ'ըլլար

վիլլաֆրանքայի խոստումները . և ասկէ աւելի եթէ իտալիա օր մը մի ու անկախ տէրութիւն ձեանար, Գաղղիա կը կորուսանէր բոլորովին նոյն երկրին վրայ ունենալիք զլխաւորութեան ակնկալութիւնը : Ստոյգ է թէ կրնար Գաղղիա յուսալ որ իտալիա այս ենթադրեալ պարագայիս մէջ ալ միշտ երախտագէտ կ'ըլլայ իրեն և համակրութիւն կը ցուցնէ առ ինքն, բայց այն ատեն փոխանակ զինակից ու հպատակ տէրութեան՝ կրնար դաշնակից տէրութիւն մ'ըլլալ :

Նաբոլէոն կը փափաքէր անշուշտ իտալիոյ յաղորութեանը, որուն համամիտ էր և Անգղիա . անշուշտ բացարձակապէս կը պաշտպանէր զիտալիա եթէ տակաւին իր մտածմաննցն ու գործոցը տէր ըլլար . բայց հիմա իր 1848 ամին բռնած կենաց ընթացքին պատիժը կը կրէր . ալ ազատ չէր 'ի գործս իւր : Բոլոր պապական ինչպէս և ուրիշ գաւառք՝ իտալական թագաւորութեան մասն կ'ուզէին ըլլալ, և հետևաբար բոլոր կղերական կուսակցութիւնն 'ի Գաղղիա և ընդ ամենայն Եւրոպէ, իտալացւոց դէմ թշնամի պիտի յառնէին : Նաբոլէոն նախագահական ընտրութեան մէջ իր կողմը շահելու համար զիրենք՝ ոչնչացուցեր էր հռովմէական հասարակագետութիւնն և բազում հնարիք ձեռնտու եղեր էր կղերականաց : Իսկ հիմա կղերականութիւնն այնպէս զօրացեր էր, որ կրնար երկիւղի առիթ ըլլալ Նաբոլէոնի . ուստի իտալական ազատութեան ձեռնտու ըլլալու ատեն, պէտք էր զգուշանար չի կորուսանելու իր գահուն զօրաւոր նեցուկն ու ամբողջութիւնը :

Կը շարունակուի :